



Հայաստանի առողջապահության նախարարության և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 3

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Քննաթերթ - պատասխաններ

<i>Հարցեր 1-25</i>	<i>50 միավոր</i>
<i>Խնդիր 1</i>	<i>15 միավոր</i>
<i>Խնդիր 2</i>	<i>10 միավոր</i>
<i>Խնդիր 3</i>	<i>10 միավոր</i>
<i>Խնդիր 4</i>	<i>15 միավոր</i>
<i>Ընդամենը</i>	<i>100 միավոր</i>

Հուլիս, 2026թ.

Հարցեր 1-25

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1	բ
2	բ
3	դ
4	գ
5	ա
6	բ
7	գ
8	բ
9	գ
10	ա
11	ա
12	ա
13	ա
14	բ
15	դ
16	ա
17	բ
18	դ
19	բ
20	դ
21	դ
22	ա
23	ա
24	ա
25	գ

Ընդամենը 50 միավոր

Հարցը, պատասխանի ճիշտ տարբերակը և իրավական հիմքը

1. Քաղաքացիական օրենսդրությունը և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերը կարգավորում են.

Պատասխան՝ բ) քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, սեփականության և այլ գույքային իրավունքների ու մտավոր սեփականության նկատմամբ բացառիկ իրավունքների ծագման հիմքերն ու իրականացման կարգը, պայմանագրային և այլ պարտավորությունները, ինչպես նաև այլ գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մաս (քաղաքացիական օրենսդրությամբ և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերությունները):

2. Համատեղությամբ աշխատանքի դեպքում, եթե բացակայում է կողմերի համաձայնությունը, ղրն է համարվում հիմնական աշխատանք.

Պատասխան՝ բ) այն աշխատանքը, որը կատարվում է առավել վաղ կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածի 4-րդ մաս (համատեղությամբ աշխատանքի դեպքում հիմնական աշխատանքը որոշելու և կողմերի համաձայնությամբ այն փոփոխելու վերաբերյալ):

3. Որոշակի ժամկետով պայմանագրեր կնքվում են.

Պատասխան՝ դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մաս (որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը):

4. Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրով ֆինանսավորում ստանալու նպատակով ղր դրամական պահանջը կարող է լինել զիջման առարկա.

Պատասխան՝ գ) ինչպես այն դրամական պահանջը, որի վճարման ժամկետը վրա է հասել, այնպես էլ ապագայում ծագելիք դրամական պահանջը:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 894-րդ հոդվածի 1-ին մաս (ֆինանսավորում ստանալու նպատակով զիջված դրամական պահանջը):

5. Նշվածներից ղրն է ժամկետային ավանդի տարատեսակ.

Պատասխան՝ ա) կուտակային կենսաթոշակային ավանդը:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 905-րդ հոդվածի 1-ին մաս (ավանդների տեսակներ):

6. Վարձակալած գույքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները ո՞ւմ սեփականությունն են համարվում՝

Պատասխանը՝ բ) վարձակալի սեփականությունը, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 626-րդ հոդվածի 1-ին մաս (վարձակալած գույքի բարելավումները):

7. Երբ է որոշակի երրորդ անձի անունով ներդրված ավանդի շահառուն ձեռք բերում ավանդատուի իրավունքներ.

Պատասխան՝ գ) բանկին այդ իրավունքների վրա հիմնված առաջին պահանջը ներկայացնելու կամ դրանցից օգտվելու մտադրության մասին այլ եղանակով տեղեկացնելու պահից, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 910-րդ հոդվածի 1-ին մաս (ավանդներ հոգուտ երրորդ անձանց):

8. Ո՞ր գործարքն է համարվում շինծու.

Պատասխան՝ բ) մեկ այլ գործարք քողարկելու նպատակով կնքված գործարքը:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 2-րդ մաս (կեղծ և շինծու գործարքների անվավերությունը):

9. Վարկային պայմանագրի գրավոր ձևը չպահպանվելու դեպքում.

Պատասխան՝ գ) վարկային պայմանագիրը համարվում է անվավեր և առոչինչ:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 888-րդ հոդված (վարկային պայմանագրի ձևը):

10. Ի՞նչ ժամկետում պետք է կատարվի այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով.

Պատասխան՝ ա) պարտատիրոջ պահանջը ներկայացնելու օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից,

պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 3-րդ մաս (պարտավորության կատարման ժամկետը):

11. Ինչ հետևանք է առաջացնում կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրում ապագայում հանձնվելիք անշարժ գույքի գնի մասին պայմանի բացակայությունը.

Պատասխան՝ ա) պայմանագիրը համարվում է չկնքված:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 570.1-ին հոդվածի 2-րդ մաս (կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից անշարժ գույք կամ բնակելի տուն գնելու իրավունքի պայմանագրի առանձնահատկությունները):

12. Աշխատանքային կարգապահությունը խախտելու համար ինչ կարգապահական տույժեր կարող են կիրառվել.

Պատասխան՝ ա) նկատողություն, խիստ նկատողություն և օրենքով նախատեսված համապատասխան հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մաս (Կարգապահական տույժերը):

13. Երբ կարող է գործատուն լուծել աշխատանքային պայմանագիրը՝ աշխատողի զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու հիմքով.

Պատասխան՝ ա) եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկից.

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մաս (Աշխատանքային պայմանագրի լուծումը գործատուի նախաձեռնությամբ):

14. Ո՞ր դեպքում է ուժը կորցրած ճանաչվում աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը.

Պատասխան՝ բ) ծանուցման ժամկետը լրանալուց հետո անցել է հինգ օրից ավելի և գործատուն չի լուծել աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 5-րդ մաս (Աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը):

15. Երբ է գործատուն պարտավոր աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ.

Պատասխան՝ դ) աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե օրենսգրքով, օրենքով կամ կողմերի համաձայնությամբ այլ կարգ նախատեսված չէ:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մաս (Աշխատողի հետ վերջնահաշվարկի կարգը):

16. Նշված պնդումներից որն է ճիշտ.

Պատասխան՝ ա) գործատուն վճարում է հանրակրթական, մասնագիտական կամ բարձրագույն կրթության կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում սովորող աշխատողին տրամադրված ուսումնական արձակուրդի համար, եթե գործատուն աշխատողին գործուղել է սովորելու՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար աշխատողի միջին օրական աշխատավարձից ոչ պակաս չափով:

Հիմք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մաս (Ուսումնական արձակուրդի վարձատրության պայմանները):

17. Նշված պնդումներից որն է ճիշտ.

Պատասխան՝ բ) տնտեսական ընկերակցության կամ ընկերության մասնակիցները պարտավոր են ավանդներ ներդնել կանոնադրությամբ նախատեսված կարգով, չափերով, եղանակներով և ժամկետներում:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մաս (Տնտեսական ընկերակցության կամ ընկերության մասնակիցների իրավունքները և պարտականությունները):

18. Նշված պնդումներից որն է ճիշտ հավաստիության կանխավարկածի վերաբերյալ.

Պատասխան՝ դ) անձի ներկայացրած տվյալները համարվում են հավաստի, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել, իսկ դրանց իսկության վերաբերյալ հիմնավոր կասկածների դեպքում վարչական մարմինը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ստուգել դրանք:

Հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդված (Հավաստիության կանխավարկածը):

19. Եթե իրավաբանական անձ պարտապանն առարկում է վճարային պարտավորության դեմ, ո՞ր դեպքում է այն համարվում անվիճելի.

Պատասխան՝ բ) եթե վճարային պարտավորությունը ճանաչված է օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով, և բացակայում է հաշվանցի հնարավորությունը.

Հիմք՝ «Սնանկության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մաս (Պարտապանին սնանկ ճանաչելու հիմքերն ու անվճարունակության հատկանիշները):

20. Ի՞նչ հետևանք է առաջանում, եթե նախավճարով ապահովված պայմանագիրը չի կատարվում կողմերից մեկի պատասխանատվությամբ.

Պատասխան՝ դ) եթե պատասխանատու է նախավճար տված կողմը, նախավճարը մնում է մյուս կողմին, իսկ եթե պատասխանատու է նախավճար ստացած կողմը, նա պարտավոր է մյուս կողմին վճարել նախավճարի գումարի կրկնապատիկը:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 396-րդ հոդվածի 2-րդ մաս (Նախավճարով ապահովված պարտավորությունը դադարելու և այն չկատարելու հետևանքները):

21. Նշվածներից ո՞րը մասնագիտացված դատարան չէ.

Պատասխան՝ դ) քրեական դատարանը:

Հիմք՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մաս (Հայաստանի Հանրապետության դատարաններ):

22. Ո՞ր դեպքում գրավառուն իրավունք ունի պահանջել գրավով ապահովված պարտավորության վաղաժամկետ կատարում.

Պատասխան՝ ա) եթե գրավի առարկան կորել է այնպիսի հանգամանքներում, որոնց համար գրավառուն պատասխանատու չէ, իսկ գրավատուն չի օգտվել գրավի առարկան վերականգնելու կամ այն համարժեք գույքով փոխարինելու իրավունքից.

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 246-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ (Գրավով ապահովված պարտավորությունը վաղաժամկետ կատարելը և գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելը):

23. Երբ է դադարում երաշխավորությունը, եթե հիմնական պարտավորության կատարման ժամկետը նշված չէ և չի կարող որոշվել կամ որոշված է պահանջի պահով.

Պատասխան՝ ա) եթե պարտատերը երաշխավորության պայմանագիր կնքելու օրվանից երկու տարվա ընթացքում երաշխավորի դեմ հայց չի հարուցել:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 382-րդ հոդված (երաշխավորությունը դադարելը):

24.Նշված պնդումներից որն է ճիշտ.

Պատասխան՝ ա) Անձնական սահմանափակ սերվիտուտը կարող է տրամադրվել անժամկետ կամ որոշակի ժամկետով: Իրավաբանական անձին տրամադրվող անձնական սահմանափակ սերվիտուտը չի կարող գերազանցել 10 տարին:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 217.1-րդ հոդվածի 3-րդ մաս (անձնական սահմանափակ սերվիտուտը):

25.Նշված պնդումներից որն է ճիշտ հողամասի կառուցապատման իրավունքի վերաբերյալ.

Պատասխան՝ գ) կառուցապատման ժամկետի ավարտից հետո կառուցապատողի կատարած անբաժանելի բարելավումները չեն հատուցվում, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ, իսկ կառուցապատման իրավունքով կառուցված կամ ստեղծված շենքերն ու շինությունները հողամասի սեփականատիրոջ սեփականությունն են, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հիմք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204.1-րդ 3-րդ և 4-րդ մասեր (Հողամասի կառուցապատման իրավունքը):

ԲԱԺԻՆ Բ. Պատասխաններ

Խնդիր 1 (15 միավոր)

Հարց 1. Ներկայացրե՞ք ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հասկացությունը, կնքման կարգը և պայմանագրի կատարումից պատվիրատուի միակողմանի հրաժարման կարգն ու իրավական հետևանքները: (5 միավոր)

Պատասխան՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի

գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 778-րդ հոդվածի համաձայն՝ կատարողը պարտավոր է ծառայությունները մատուցել անձամբ, եթե այլ բան նախատեսված չէ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով:

Վերոնշյալ կարգավորումներից բխում է, որ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը գրավոր կարգով կնքվող գործարք է, որով կատարողի հիմնական պարտականությունը պայմանագրով նախատեսված ծառայությունները պատշաճ կերպով մատուցելն է: Ընդհանուր կանոնի համաձայն՝ կատարողը պարտավոր է ծառայությունները մատուցել անձամբ, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Պատվիրատուի հիմնական պարտականությունը փաստացի մատուցված ծառայությունների համար պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով վճարելն է:

Միաժամանակ պատվիրատուին վերապահված է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու իրավունք՝ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով:

Այսինքն՝ պատվիրատուի՝ պայմանագրից հրաժարվելու իրավունքը պայմանավորված չէ կատարողի կողմից պարտավորության խախտում թույլ տալու կամ այլ հատուկ հիմքի առկայությամբ: Այն իրականացվում է կատարողին պայմանագրի հետագա կատարումից հրաժարվելու վերաբերյալ կամահայտնություն հայտնելով, և կատարողի համաձայնությունը դրա համար չի պահանջվում:

Օրենքով թույլատրված միակողմանի հրաժարման դեպքում պայմանագիրը համարվում է լուծված: Սակայն պայմանագրի լուծումը պատվիրատուին չի ազատում մինչև լուծման պահը ծագած պարտավորությունների կատարումից: Մասնավորապես, պատվիրատուն պարտավոր է՝

1. վճարել մինչև պայմանագրի լուծումը փաստացի մատուցված ծառայությունների համար,

2. հատուցել կատարողի՝ պայմանագրի կատարման նպատակով փաստացի կատարած և չհատուցված ծախսերը:

Հետևաբար պատվիրատուի կողմից պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելն օրենքով վերապահված իրավունքի իրականացում է և ինքնին չի համարվում պարտավորության խախտում: Պատվիրատուի վրա պահպանվում է միայն

մինչև պայմանագրի լուծումը մատուցված ծառայությունների արժեքը և կատարողի փաստացի ծախսերը վճարելու պարտականությունը:

Հարց 2. Իրավաչափ է արդյոք Պատվիրատուի՝ պայմանագրի հետագա կատարումից հրաժարվելը: Պարտավոր է արդյոք Պատվիրատուն վճարել պայմանագրի դադարեցումից հետո՝ 2025 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար պահանջվող 240.000 ՀՀ դրամը, և ինչպիսի հատուցում կարող էր վճարվել Կատարողին: Հիմնավորե՞ք պատասխանը: (5 միավոր)

Պատասխան՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով:

Խնդրի փաստերից հետևում է, որ Կողմերի միջև 01.02.2025 թվականին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը նախատեսել է ծառայությունների մատուցումից հրաժարվելու որոշակի ժամկետային սահմանափակում՝ նախատեսելով, որ Պատվիրատուն կարող է հրաժարվել պայմանագրի հետագա կատարումից՝ այդ մասին առնվազն 15 օր առաջ գրավոր ծանուցելով Կատարողին:

Սույն դեպքում Արմինե Արզումանյանն օգտվել է ծառայություններից մինչև 2025 թվականի սեպտեմբեր ամիսը՝ պայմանագրով սահմանված կարգով վճարելով այդ ժամանակահատվածի համար նախատեսված ծառայության գումարը: Միաժամանակ, պահպանելով պայմանագրով սահմանված ժամկետը, Արմինե Արզումանյանը հայտնել է Կատարողին պայմանագրից հրաժարվելու մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածով նախատեսված կարգավորումից բխում է, որ Արմինե Արզումանյանն ազատ էր հրաժարվել ծառայությունների մատուցման պայմանագրից դրա մասին հայտնելով կատարողին: Միակ սահմանափակումը (բացասական հետևանքը), որն առաջ է գալիս ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրից հրաժարվելու պարագայում Կատարողի փաստացի կատարած ծախսերը հատուցելն է:

Նման պարագայում պետք է արձանագրել, որ Արմինե Արզումանյանի կողմից ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրից հրաժարվելն իրավաչափ է:

Միաժամանակ հաշվի առնելով, որ Կատարողը Արմինե Արզումանյանի պահանջով 01.10.2025 թվականից դադարեցրել է մատուցել ծառայություններ, իսկ նշված պայմանագրից հրաժարվելու դեպքում, ինչպես արդեն նշվեց վերը, Պատվիրատուն հատուցում է միայն փաստացի կատարած ծախսերը՝ պետք է արձանագրել, որ Պատվիրատուն պարտավոր չէ վճարել 2025 թվականի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար պահանջվող 240.000 ՀՀ դրամը, քանի որ

Պատվիրատուի կողմից հրաժարվելու ուժով նշված ժամանակահատվածում ծառայություններ չեն մատուցվել, պայմանագիրը լուծվել է, իսկ պայմանագրից հրաժարվելու դեպքում հատուցվում են միայն փաստացի կատարված ծախսերը:

Հարց 3. Ներկայացրե՞ք տուժանքի ընդհանուր հասկացությունը և տեսակները: Իրավաչափ է արդյոք պայմանագրի այն պայմանը, որով Պատվիրատուի՝ պայմանագրից միակողմանի հրաժարվելու դեպքում նախատեսվել է 600.000 ՀՀ դրամ տուգանք, ինչպես նաև զրոյաների նկատմամբ կարող է հաշվարկվել պայմանագրով նախատեսված տույժը: Հիմնավորե՞ք պատասխանը: (5 միավոր)

Պատասխան՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ տուժանքով ապահովվում է միայն իրական պահանջը:

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պարտատերն իրավունք չունի պահանջել վճարելու տուժանք, եթե պարտապանը պատասխանատվություն չի կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն խնդրի պայմաններում ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով նախատեսվել է 600.000 ՀՀ դրամ տուգանք՝ որպես նախապես որոշված միանվագ գումար, իսկ յուրաքանչյուր կետանցված օրվա համար հաշվարկվող 0,01 տոկոսը տույժ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 1-ին կետով Պատվիրատուին վերապահված է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու իրավունք՝ Կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով: Այդ իրավունքի իրականացման համար Կատարողի կողմից պայմանագրի խախտում թույլ տալու կամ այլ հիմքի առկայություն չի պահանջվում:

Հետևաբար Պատվիրատուի՝ պայմանագրի հետագա կատարումից հրաժարվելը օրենքով վերապահված իրավունքի իրականացում է և ինքնին չի համարվում պարտավորության չկատարում կամ անպատշաճ կատարում: Կողմերը չեն կարող օրենքով վերապահված իրավունքի իրականացումը պայմանագրով որակել որպես պարտավորության խախտում և դրա համար տուժանք նախատեսել:

Ուստի պայմանագրի այն պայմանը, որով Պատվիրատուի՝ պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում նախատեսվել է 600.000 ՀՀ դրամ տուգանք, հակասում է Պատվիրատուի հրաժարման իրավունքը սահմանող

օրենսդրական կարգավորմանը, այդ մասով անվավեր է և չի կարող համարվել իրավաչափ:

Միաժամանակ պայմանագրով նախատեսված օրական 0,01 տոկոս տույժը կարող էր կիրառվել, եթե առկա լիներ Պատվիրատուի իրական, վճարման ենթակա և ժամկետանց դրամական պարտավորություն: Մասնավորապես, տույժը կարող էր հաշվարկվել՝ մինչև պայմանագրի դադարումը փաստացի մատուցված, սակայն ժամկետում չվճարված ծառայությունների վճարի նկատմամբ: Մինչդեռ, խնդրի փաստերից բխում է, որ Արմինե Արզումանյանի կողմից պայմանագրով սահմանված կարգով վճարվել է մինչև 2025 թվականի սեպտեմբեր ամիսը մատուցված ծառայությունների դիմաց:

Միևնույն ժամանակ, տույժը չի կարող հաշվարկվել և պահանջվել պայմանագրի դադարեցումից հետո չմատուցված ծառայությունների համար պահանջվող 240.000 ՀՀ դրամի նկատմամբ և պայմանագրից հրաժարվելու համար նախատեսված 600.000 ՀՀ դրամ տուգանքի նկատմամբ:

Այսպիսով՝ Պատվիրատուի՝ պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելը պարտավորության խախտում չէ, իսկ դրա համար նախատեսված 600.000 ՀՀ դրամ տուգանքը գանձման ենթակա չէ:

Ինչ վերաբերում է պայմանագրով նախատեսված օրական 0,01 տոկոս տույժին, ապա այն կարող էր հաշվարկվել միայն Պատվիրատուի կողմից վճարման ենթակա և ժամկետանց դրամական պարտավորությունների նկատմամբ:

Խնդիր 2 (10 միավոր)

Հարց 1. Ներկայացրե՛ք գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմքերը և դրանց կիրառման ընդհանուր պայմանները: (4 միավոր)

Պատասխան՝

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվում է գործատուի նախաձեռնությամբ:

Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը նախատեսված են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածով:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝

1) գործատուի լուծարման (գործունեության դադարման), պետական հաշվառումից հանվելու, նոտար գործատուի դեպքում՝ պաշտոնից ազատվելու դեպքերում.

2) աշխատանքի ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.

3) աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում.

4) աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում.

5) աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում.

6) աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում.

7) աշխատողի երկարատև անաշխատունակության դեպքում (եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության մեջ է գտնվել ավելի քան վեց ամիս անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 180 օր՝ չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդի օրերը).

8) աշխատողի կողմից ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ աշխատավայրում գտնվելու կամ աշխատավայրում կամ աշխատավայրից դուրս աշխատանքային գործառույթներն իրականացնելու դեպքում.

9) անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքում.

10) պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքում.

11) (...)

12) օտարերկրացու կացության կարգավիճակն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու դեպքում.

13) նույն օրենսգրքի 108-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված դեպքում աշխատանքի չթույլատրվելու հետևանքով ավելի քան 10 աշխատանքային օր (հերթափոխ) անընդմեջ կամ վերջին երեք ամսվա ընթացքում ավելի քան 20 աշխատանքային օր (հերթափոխ) աշխատողի՝ իր աշխատանքային պարտականությունները չկատարելու դեպքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերով նախատեսված հիմքերով որոշակի ժամկետով կամ անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելիս գործատուն պարտավոր է այդ մասին աշխատողին ծանուցել սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով, (...) նախատեսված ժամկետներում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող

է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Գործատուի մոտ համապատասխան հնարավորությունների բացակայության դեպքում պայմանագիրը լուծվում է առանց աշխատողին այլ աշխատանք առաջարկելու:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ:

Նշված կարգավորումներից բխում է, որ Գործատուն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը՝ մինչև դրա գործողության ժամկետի լրանալը, միայն օրենքով ուղղակիորեն նախատեսված հիմքերով:

Որպես ընդհանուր կանոն Գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումն իրավաչափ լինելու համար անհրաժեշտ է, որ՝ առկա լինի ՀՀ աշխատանքային օրենսգրքով ուղղակիորեն նախատեսված հիմք, գործատուի վկայակոչած փաստական հանգամանքներն իրականում գոյություն ունենան և համապատասխանեն ընտրված իրավական հիմքին, պահպանվեն տվյալ հիմքի կիրառման համար նախատեսված հատուկ պայմանները, օրենքով նախատեսված դեպքերում պահպանվեն աշխատողին նախապես գրավոր ծանուցելու պահանջները, օրենքով նախատեսված դեպքերում աշխատողին առաջարկվի նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, բացակայեն գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու՝ օրենքով սահմանված արգելքները, պայմանագրի լուծումը ձևակերպվի գործատուի անհատական իրավական ակտով, աշխատողին վճարվեն օրենքով նախատեսված արձակման նպաստը և վերջնահաշվարկով հասանելիք գումարները:

Վերոգրյալի արդյունքում պետք է արձանագրել, որ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար բավարար չէ գործատուի՝ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու ցանկությունը: Անհրաժեշտ է օրենքով նախատեսված հիմքի և այդ հիմքի կիրառման բոլոր պարտադիր պայմանների միաժամանակյա առկայությունը:

Հարց 2. Գնահատե՞ք՝ արդյոք սույն դեպքում առկա էր աշխատանքի ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական կամ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխմամբ կամ արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմք: Հիմնավորե՞ք պատասխանը: (3 միավոր)

Պատասխան՝

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործատուն իրավունք ունի աշխատողի հետ լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ աշխատանքի ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում:

Նշված հիմքի առկայության համար անհրաժեշտ է, որ՝

1. գործատուի մոտ իրականում տեղի ունենա աշխատանքի ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական կամ աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխություն կամ առաջանա արտադրական անհրաժեշտություն,

2. այդ փոփոխության հետևանքով փաստացի կրճատվի աշխատողների քանակը և (կամ) հաստիքը,

3. տեղի ունեցած փոփոխության և հաստիքի կրճատման միջև առկա լինի պատճառական կապ:

Խնդրի փաստերի համաձայն՝ Գործատուն որոշում է ընդունել հաշվապահական հաշվառման գործընթացներն ավտոմատացնելու և Ընկերության կառուցվածքը փոփոխելու մասին: Նշված փոփոխությունների արդյունքում սահմանված կարգով հաստատվել է նոր հաստիքացուցակ, որով Ընկերությունում առկա հաշվապահի միակ հաստիքը կրճատվել է: Խնդրի պայմանով նաև ուղղակիորեն սահմանված է, որ ինչպես Գործատուի կառուցվածքային փոփոխությունը, այնպես էլ հաշվապահի հաստիքի կրճատումն իրականում տեղի են ունեցել:

Հետևաբար տվյալ դեպքում առկա են եղել տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների իրական փոփոխություն, հաշվապահի հաստիքի փաստացի կրճատում, ինչպես նաև այդ փոփոխության և հաստիքի կրճատման միջև անմիջական պատճառահետևանքային կապ:

Այսպիսով՝ սույն դեպքում առկա էր ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման հիմքով Աննա Մանուկյանի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված հիմքը:

Հարց 3. Պարտավոր էր արդյոք Գործատուն Աննա Մանուկյանին առաջարկել ֆինանսական մասնագետի թափուր հաստիքը: Ինչ ազդեցություն ունի աշխատողին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու պարտականության չկատարումն Աննա Մանուկյանի հետ աշխատանքային պայմանագրի լուծման իրավաչափության վրա: Հիմնավորե՞ք պատասխանը: (3 միավոր)

Պատասխան՝

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից բխում է, որ աշխատողների քանակի կամ հաստիքների կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Գործատուի մոտ աշխատողին համապատասխան այլ աշխատանք առաջարկելու հնարավորության բացակայության դեպքում աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել առանց այլ աշխատանք առաջարկելու:

Նշվածից բխում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կրճատման իրական հիմքի առկայությունը դեռևս բավարար չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար: Եթե գործատուի մոտ առկա է աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը և առողջական վիճակին համապատասխան թափուր աշխատանք, ապա գործատուն պարտավոր է նախ այն առաջարկել աշխատողին: Աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել, եթե աշխատողը հրաժարվում է առաջարկված աշխատանքից:

Խնդրի փաստերի համաձայն՝ Աննա Մանուկյանն ունեցել է բարձրագույն տնտեսագիտական կրթություն և հաշվապահական ոլորտում ութ տարվա աշխատանքային փորձ: Ֆինանսական մասնագետի թափուր հաստիքի համար պահանջվել են բարձրագույն տնտեսագիտական կրթություն և ֆինանսական կամ հաշվապահական ոլորտում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ:

Հետևաբար Աննա Մանուկյանի մասնագիտական պատրաստվածությունը և որակավորումը համապատասխանել են ֆինանսական մասնագետի պաշտոնի համար սահմանված պահանջներին, իսկ խնդրի փաստերում բացակայել են նշված հաստիքին վերջինիս անհամապատասխանությունը վկայող փաստական հանգամանքներ:

Նշված հանգամանքները վկայում են, որ Գործատուի մոտ առկա է եղել Աննա Մանուկյանին նրա մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը համապատասխան այլ աշխատանք առաջարկելու իրական հնարավորություն:

Այսպիսով՝ Գործատուն պարտավոր էր Աննա Մանուկյանին առաջարկել ֆինանսական մասնագետի թափուր հաստիքը: Քանի որ այդ աշխատանքը նրան չի առաջարկվել, չի պահպանվել կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու պարտադիր պայմաններից մեկը: Հետևաբար, թեև հաշվապահի հաստիքի կրճատման նյութական հիմքն առկա է եղել, Աննա Մանուկյանի հետ աշխատանքային պայմանագրի լուծումն իրավաչափ չէ:

Խնդիր 3 (10 միավոր)

Հարց 1. Ներկայացրե՞ք առոչինչ և վիճահարույց (անվավեր) գործարքների տարբերությունները, ինչպես նաև գործարքների անվավերության ընդհանուր իրավական հետևանքները: (4 միավոր)

Պատասխան՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

Վիճահարույց (անվավեր) և առոչինչ գործարքների հիմնական տարբերությունն այն է, որ վիճահարույց գործարքը համարվում է անվավեր միայն դատարանի կողմից այն անվավեր ճանաչվելու դեպքում: Մինչև համապատասխան դատական ակտի առկայությունը գործարքը համարվում է վավեր և կարող է առաջացնել դրանով նախատեսված իրավական հետևանքները:

Առոչինչ գործարքն անվավեր է օրենքի ուժով՝ անկախ այն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտի առկայությունից: Դատարանը նման դեպքում ոչ թե գործարքն է դարձնում անվավեր, այլ կիրառում է անվավերության հետևանքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործարքի անվավերության դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում (ներառյալ, երբ ստացածն արտահայտվում է գույքից օգտվելու, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության մեջ)՝ հատուցել դրա արժեքը դրամով, եթե գործարքի անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն օրենքով:

Վերոնշյալ հոդվածներից բխում է, որ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Գործարքի անվավերության ընդհանուր հետևանքը երկկողմանի ռեստիտուցիան է. կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով ամբողջ ստացածը, իսկ ստացածը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում՝ դրա արժեքը հատուցել դրամով, եթե օրենքով անվավերության այլ հետևանքներ նախատեսված չեն:

Հարց 2. Գնահատե՞ք՝ Արման Սահակյանի և Կարեն Սահակյանի միջև կնքված բնակարանի առուվաճառքի պայմանագրի վավերությունը: Ի՞նչ նշանակություն ունեն գործարքի կնքման նպատակը, գնի վճարումը հաստատող ապացույցների բացակայությունը, սեփականության իրավունքի պետական գրանցումը և

**բնակարանը նախկին սեփականատիրոջ կողմից շարունակաբար օգտագործելը:
Հիմնավորե՞ք պատասխանը: (6 միավոր)**

Պատասխան՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 306-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կեղծ գործարքը, այսինքն՝ առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության կնքված գործարքը, առոչինչ է:

Կեղծ գործարքի դեպքում կողմերի արտահայտած արտաքին կամահայտնությունը չի համապատասխանում նրանց իրական ներքին կամքին: Կողմերը ձևականորեն կնքում են որոշակի գործարք, սակայն իրականում չեն ցանկանում առաջացնել այդ գործարքին բնորոշ իրավունքներն ու պարտականությունները: Նրանց նպատակը համապատասխան իրավահարաբերության առկայության պատրանք ստեղծելն է:

Գործարքի պատշաճ ձևով կնքումը, նոտարական վավերացումը կամ դրանից բխող իրավունքի պետական գրանցումն ինքնին չեն բացառում գործարքի կեղծ լինելը: Կեղծ գործարքի կողմերը կարող են ձևականորեն պահպանել օրենքով նախատեսված բոլոր պահանջները՝ երրորդ անձանց մոտ իրական գործարքի առկայության տպավորություն ստեղծելու նպատակով:

Միաժամանակ միայն գործարքի չկատարումը նույնպես ինքնաբերաբար չի նշանակում, որ այն կեղծ է: Գործարքի չկատարումը կարող է հանդիսանալ պայմանագրային պարտավորության խախտում: Ուստի գործարքի կեղծ լինելը պետք է գնահատվի բոլոր հանգամանքների համակցությամբ:

Կեղծ գործարքի դեպքում, երբ գույքի նկատմամբ իրավունքը միայն ձևականորեն է փոխանցվել, որպես անվավերության հետևանք կարող են վերականգնվել նախկին սեփականատիրոջ իրավունքը և դրան համապատասխան պետական գրանցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 561-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վաճառողը, անշարժ գույքի առուվաճառքի (այսուհետ՝ անշարժ գույքի վաճառքի) պայմանագրով պարտավորվում է գնորդի սեփականությանը հանձնել հողամաս, շենք, շինություն, բնակարան կամ այլ անշարժ գույք (հոդված 134):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 567-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անշարժ գույքի վաճառքի պայմանագիրը պետք է նախատեսի դրա գինը:

Առուվաճառքի պայմանագրով վաճառողը պարտավորվում է բնակարանը հանձնել գնորդի սեփականությանը, իսկ գնորդը՝ ընդունել բնակարանը և վճարել դրա համար պայմանագրով սահմանված գինը: Հետևաբար առուվաճառքի պայմանագրին համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու իրական մտադրության մասին կարող են վկայել գնի վճարումը, գույքը գնորդին հանձնելը և գնորդի կողմից սեփականատիրոջ լիազորությունների փաստացի իրականացումը:

Խնդրի փաստերի համաձայն՝ առուվաճառքի պայմանագիրը կնքվել է Արման Սահակյանի՝ Վահե Մկրտչյանի նկատմամբ ունեցած 18.000.000 ՀՀ դրամ պարտավորությունը կատարելու ժամկետի ավարտից հետո: Այս հանգամանքն ինքնին

բավարար չէ գործարքը կեղծ որակելու համար, սակայն կարող է վկայել գործարքի կնքման հեռահար նպատակի՝ պարտատիրոջ պահանջից գույքը հեռացնելու մասին:

Գործարքը կնքվել է մերձավոր ազգականների՝ եղբայրների միջև: Կողմերի ազգակցական կապը ևս առանձին վերցրած չի ապացուցում գործարքի կեղծ լինելը, սակայն մյուս հանգամանքների հետ համակցությամբ կարող է նշանակություն ունենալ կողմերի համաձայնեցված վարքագիծը գնահատելիս: Մասնավորապես, Պայմանագրում նշվել է, որ Կարեն Սահակյանն ամբողջությամբ վճարել է 25.000.000 ՀՀ դրամ գինը: Մինչդեռ գումարի վճարումը չի հաստատվել բանկային հաշիվների շարժով, ստացականով կամ որևէ այլ փաստաթղթով: Միայն վճարումը հաստատող առանձին փաստաթղթի բացակայությունը բավարար չէ եզրակացնելու, որ գինը չի վճարվել, հատկապես այն դեպքում, երբ պայմանագրում կողմերը հավաստել են վճարման փաստը: Սակայն տվյալ դեպքում այդ հանգամանքը պետք է գնահատվի կողմերի հետագա վարքագծի հետ համակցությամբ:

Պայմանագրի կնքումից և Կարեն Սահակյանի սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո բնակարանի նկատմամբ փաստացի հարաբերությունները չեն փոփոխվել: Մասնավորապես՝ Արման Սահակյանը շարունակել է բնակվել բնակարանում, Արմանը շարունակել է կատարել կոմունալ և վերանորոգման ծախսերը, Կարեն Սահակյանը բնակարանը չի ընդունել և չի օգտագործել, Կարեն Սահակյանը բնակարանի պահպանման կամ օգտագործման հետ կապված որևէ ծախս չի կատարել: Ընդ որում, ըստ խնդրի փաստերի՝ Կարեն և Արման Սահակյանները համաձայնություն են ձեռք բերել բնակարանը կրկին սեփականության իրավունքով Արման Սահակյանին հանձնելու, քանի որ հենց վերջինս էլ կատարում էր բնակարանի պահպանության հետ կապված գործողությունները:

Այս հանգամանքները ցույց են տալիս, որ չնայած սեփականության իրավունքի ձևական պետական գրանցմանը՝ բնակարանի նկատմամբ սեփականատիրոջ լիազորությունները փաստացի շարունակել է իրականացնել Արման Սահակյանը, որպիսի պարագայում գործ ունենք կեղծ գործարքի հետ:

Արման Սահակյանի՝ բնակարանում բնակվելը տեսականորեն կարող էր պայմանավորված լինել Կարեն Սահակյանի համաձայնությամբ: Սակայն միայն նման բանավոր համաձայնության վերաբերյալ կողմերի հայտարարությունը չի բացատրում գնի վճարումը հաստատող ապացույցների բացակայությունը, բնակարանի բանալիները գնորդին չհանձնելը և Կարեն Սահակյանի կողմից բնակարանի նկատմամբ որևէ փաստացի գործողություն չկատարելը:

Պայմանագրի ձևի պահպանումը և սեփականության իրավունքի պետական գրանցումը նույնպես ինքնին չեն վկայում կողմերի իրական կամքի մասին: Կեղծ գործարքի դեպքում պետական գրանցումը կարող է կատարվել հենց գույքի օտարման արտաքին պատրանք ստեղծելու նպատակով:

Այսպիսով՝ հետևյալ հանգամանքների համակցությունը՝ Արման Սահակյանի չկատարված պարտավորության առկայությունը, պարտքը վերադարձնելու ժամկետից

հետո գույքի օտարումը, գործարքը մերձավոր ազգականի հետ կնքելը, բնակարանի գնի վճարումը հաստատող ապացույցների բացակայությունը, բնակարանի փաստացի տիրապետման և օգտագործման անփոփոխ մնալը, Կարեն Սահակյանի կողմից սեփականատիրոջ լիազորությունների փաստացի չիրականացումը, սեփականության իրավունքը կրկին Արման Սահակյանին հանձնելու մտադրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արման և Կարեն Սահակյանները չեն ունեցել բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքն իրականում փոխանցելու և առուվաճառքի պայմանագրին համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրություն: Նրանց իրական նպատակն առուվաճառքի հարաբերության պատրանք ստեղծելն ու բնակարանը Արման Սահակյանի պարտատիրոջ հնարավոր պահանջից հեռացնելն է եղել:

Հետևաբար Արման Սահակյանի և Կարեն Սահակյանի միջև կնքված բնակարանի առուվաճառքի պայմանագիրը կեղծ գործարք է և առոչինչ:

Խնդիր 4 (15 միավոր)

Հարց 1. Ներկայացրե՞ք գրավի իրավունքի հասկացությունը, դրա լրացուցիչ՝ ակցեսոր բնույթը, ինչպես նաև գրավով ապահովված պահանջի ծավալը: (5 միավոր)
Պատասխան՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավի իրավունքը (այսուհետ՝ գրավը) գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է, որը միաժամանակ միջոց է գրավառուի հանդեպ պարտապանի ունեցած դրամական կամ այլ պարտավորության կատարման ապահովման համար:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավը լրացուցիչ՝ ակցեսոր պարտավորություն է գրավառուի՝ պարտատիրոջ հանդեպ գրավատուի՝ պարտապանի հիմնական պարտավորության կատարման ապահովման համար:

Նշված կարգավորումից բխում է, որ գրավը ինքնուրույն, հիմնական պարտավորությունից անկախ գոյություն ունեցող պարտավորություն է: Այն կապված է հիմնական պարտավորության հետ և ծառայում է դրա կատարման ապահովմանը: Գրավի առարկայի վրա բռնագանձում կարող է տարածվել այն դեպքում, երբ պարտապանը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել հենց այն պարտավորությունը, որի կատարման ապահովման համար գրավը սահմանվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 226-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գրավով ապահովված պարտավորության պարտատերը՝ գրավառուն, պարտապանի կողմից այդ պարտավորությունը չկատարվելու դեպքում գույքի տիրոջ՝ գրավատուի մյուս պարտատերերի հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի: (...):

Այսինքն՝ գրավառուն գրավադրված գույքի արժեքի հաշվին ունի նախապատվությամբ բավարարում ստանալու իրավունք, սակայն այդ իրավունքը վերաբերում է միայն գրավով ապահովված պահանջին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 233-րդ հոդվածի համաձայն՝ գրավն ապահովում է գրավառուի պահանջն այն ծավալով, որն այն ունի փաստացի բավարարման պահին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ օրենքով: Այդ պահանջը մասնավորապես ներառում է տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասների, ինչպես նաև գրավ դրված գույքը պահելու, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար գրավառուի կատարած կամ կատարվելիք ծախսերի, ներառյալ՝ գրավի առարկան իրացնելու հետ կապված հարկերի գումարների հատուցումը, որոնք գրավառուն պարտավոր է վճարել որպես գրավատուի հարկային գործակալ:

Խնդրի փաստերի համաձայն՝ Ընկերության և Բանկի միջև կնքված գրավի պայմանագրում նշվել է, որ գրավով ապահովվում են 15.01.2025 թվականի վարկային պայմանագրից բխող Ընկերության պարտավորությունները՝ ներառյալ վարկի հիմնական գումարը, տոկոսները, տուժանքը և գրավի առարկայի իրացման հետ կապված ծախսերը:

Հետևաբար տվյալ դեպքում գրավով ապահովված է միայն «Թեո Մետալս» ՍՊԸ-ի՝ 15.01.2025 թվականի վարկային պայմանագրից բխող պարտավորությունը՝ այն ծավալով, որն առկա է եղել փաստացի բավարարման պահին:

«Գամմա» ՍՊԸ-ի՝ 01.09.2025 թվականի վարկային պայմանագրից բխող պարտավորությունը տվյալ գրավով ապահովված պահանջ չէ, քանի որ դրա ապահովման վերաբերյալ որևէ գրավի կամ այլ ապահովման պայմանագիր չի կնքվել:

Այսպիսով՝ գրավը հիմնական պարտավորության կատարումն ապահովող լրացուցիչ գույքային իրավունք է, իսկ գրավառուն գրավադրված գույքի արժեքից կարող է բավարարում ստանալ միայն այն պահանջի մասով, որը տվյալ գրավով ապահովված է:

Հարց 2. Դադարել է արդյոք Բանկի գրավի իրավունքը գրավադրված ոչ բնակելի տարածքը «Գամմա» ՍՊԸ-ին օտարելու հետևանքով: Ինչ իրավական կարգավիճակ է ձեռք բերել «Գամմա» ՍՊԸ-ն գրավով ծանրաբեռնված գույքը ձեռք բերելու արդյունքում: Կարո՞ղ էր Բանկը բռնագանձում տարածել «Գամմա» ՍՊԸ-ին պատկանող ոչ բնակելի տարածքի վրա՝ «Թեո Մետալս» ՍՊԸ-ի պարտավորությունը չկատարելու հիմքով: (5 միավոր)

Պատասխան՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավատուն իրավունք ունի գրավի առարկան օտարելու, այն տրամադրելու վարձակալության կամ անհատույց օգտագործման կամ տնօրինելու այլ կերպ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Խնդրի փաստերի համաձայն՝ «Թեո Մետալս» ՍՊԸ-ն ոչ բնակելի տարածքը վաճառել է «Գամմա» ՍՊԸ-ին՝ Բանկից ստանալով անհրաժեշտ համաձայնությունները և թույլտվությունները: Առուվաճառքի պայմանագրում նաև նշվել է, որ գույքը ծանրաբեռնված է Բանկի գրավի իրավունքով: Ուստի գույքի օտարումը կատարվել է այն պայմաններում, երբ գրավի իրավունքը գրանցված էր և հայտնի էր գույքը ձեռք բերողին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավ դրված գույքը հատուցմամբ կամ անհատույց օտարելիս կամ համապարփակ իրավահաջորդության կարգով այդ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն այլ անձի անցնելիս գրավի իրավունքը պահպանում է իր ուժը:

Գրավատուի իրավահաջորդը զբաղեցնում է գրավատուի տեղը և կրում նրա բոլոր պարտականությունները, եթե այլ բան նախատեսված չէ գրավառուի հետ համաձայնությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 228-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գրավատու կարող է լինել ինչպես պարտապանը, այնպես էլ երրորդ անձը:

Նշված կարգավորումներից բխում է, որ «Գամմա» ՍՊԸ-ն, ձեռք բերելով Բանկի գրավի իրավունքով ծանրաբեռնված ոչ բնակելի տարածքը, դարձել է այդ գույքի սեփականատեր և զբաղեցրել է գրավատուի տեղը:

Սակայն «Գամմա» ՍՊԸ-ն դրանով չի դարձել «Թեո Մետալս» ՍՊԸ-ի վարկային պարտավորության անձնական պարտապանը: Վարկային պարտավորության պարտապան շարունակում է մնալ «Թեո Մետալս» ՍՊԸ-ն, քանի որ խնդրի փաստերից չի բխում, որ «Գամմա» ՍՊԸ-ն ստանձնել է այդ պարտքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 248-րդ հոդվածի համաձայն՝ Գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

Խնդրի փաստերի համաձայն՝ «Թեո Մետալս» ՍՊԸ-ն չի կատարել 15.01.2025 թվականի վարկային պայմանագրից բխող պարտավորությունը: Հետևաբար առկա է եղել Բանկի գրավի իրավունքն իրացնելու և գրավադրված ոչ բնակելի տարածքի նկատմամբ բռնագանձում տարածելու հիմք:

«Գամմա» ՍՊԸ-ի այն առարկությունը, որ ինքը «Թեո Մետալս» ՍՊԸ-ի վարկային պայմանագրի կողմ չէ, հիմնավոր է միայն անձնական պատասխանատվություն չկրելու մասով: Այդ հանգամանքը չի դադարեցնում գրավը և չի խոչընդոտում Բանկին բռնագանձում տարածել հենց գրավադրված ոչ բնակելի տարածքի վրա:

Այսպիսով՝

1. ոչ բնակելի տարածքի օտարման հետևանքով Բանկի գրավի իրավունքը չի դադարել,

2. «Գամմա» ՍՊԸ-ն, որպես գրավով ծանրաբեռնված գույքի ձեռք բերող, զբաղեցրել է գրավատուի տեղը,

3. «Գամմա» ՍՊԸ-ն «Թեո Մետալս» ՍՊԸ-ի վարկային պարտավորության անձնական պարտապան չի դարձել,

4. Բանկը կարող էր բռնագանձում տարածել «Գամմա» ՍՊԸ-ին պատկանող ոչ բնակելի տարածքի վրա, սակայն միայն որպես գրավադրված գույքի վրա, այլ ոչ թե «Գամմա» ՍՊԸ-ի անձնական պատասխանատվության հիմքով:

Հարց 3. Ինչ հերթականությամբ և ինչ չափով պետք է բաշխվեր գրավադրված գույքի իրացումից ստացված 25.000.000 ՀՀ դրամը: Ո՞ւմ պետք է փոխանցվեր գրավով ապահովված պահանջը գերազանցող մնացորդ գումարը: Իրավաչափ էր արդյոք Բանկի կողմից մնացած 7.000.000 ՀՀ դրամը «Գամմա» ՍՊԸ-ի այլ՝ գրավով չապահովված պարտավորության մարմանը ուղղելը: Հիմնավորե՞ք պատասխանը: (5 միավոր)

Պատասխան՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գրավ դրված անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի), ինչպես նաև արժեթղթի իրացումից ստացված գումարից կամ գրավառուին կամ նրա նշած անձին ի սեփականություն անցած համապատասխան գույքի արժեքից այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո բավարարվում են գրավառուի՝ գրավով ապահովված պահանջները, իսկ մնացած գումարը սույն օրենսգրքի 243.1-ին հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով տասնօրյա ժամկետում փոխանցվում է գրավատուին, եթե գրավի պայմանագրով այդ գումարի փոխանցման այլ կարգ նախատեսված չէ:

Գրավառուի՝ գրավով չապահովված պահանջները նույն կետով նախատեսված գումարից (արժեքից) բավարարվում են նույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված ընդհանուր կարգով:

Խնդրի փաստերի համաձայն՝ գրավադրված գույքի իրացման ծախսերը հանելուց հետո բաշխման ենթակա զուտ գումարը կազմել է 25.000.000 ՀՀ դրամ: Բանկի՝ «Թեո Մետալս» ՍՊԸ-ի նկատմամբ գրավով ապահովված պահանջը կազմել է 18.000.000 ՀՀ դրամ:

Հետևաբար 25.000.000 ՀՀ դրամից առաջին հերթին պետք է բավարարվեր Բանկի՝ գրավով ապահովված պահանջը՝ 18.000.000 ՀՀ դրամի չափով: Այս մասով Բանկի գործողությունը իրավաչափ է, քանի որ տվյալ գումարը ուղղվել է հենց այն պարտավորության մարմանը, որի կատարման ապահովման համար գրավը սահմանվել էր:

Դրանից հետո մնացած գումարը կազմել է՝ 25.000.000 ՀՀ դրամ - 18.000.000 ՀՀ դրամ = 7.000.000 ՀՀ դրամ:

Այդ 7.000.000 ՀՀ դրամը պետք է փոխանցվեր «Գամմա» ՍՊԸ-ին՝ որպես գրավադրված գույքի իրացման պահին գրավատուի տեղը զբաղեցնող անձի և գույքի սեփականատիրոջ:

Բանկի այն պնդումը, որ «Գամմա» ՍՊԸ-ն ևս իր պարտապանն է, չի կարող հիմք հանդիսանալ գրավադրված գույքի իրացումից ստացված մնացորդ գումարը պահելու և այն «Գամմա» ՍՊԸ-ի այլ պարտավորության մարմանն ուղղելու համար: «Գամմա» ՍՊԸ-ի 01.09.2025 թվականի վարկային պայմանագրից բխող 8.000.000 ՀՀ դրամ պարտավորությունը առանձին պարտավորություն է: Այդ պարտավորության ապահովման վերաբերյալ գրավի, երաշխավորության կամ պարտավորության կատարման ապահովման այլ պայմանագրեր չեն կնքվել:

Բացի այդ, խնդրի պայմանով «Գամմա» ՍՊԸ-ի և Բանկի միջև չի կնքվել համաձայնություն, որով Բանկին իրավունք կվերապահվեր «Գամմա» ՍՊԸ-ին վերադարձման ենթակա կամ Բանկի մոտ առկա դրամական միջոցներն ուղղելու այդ վարկային պարտավորության մարմանը: Խնդրի պայմանով հաշվանցի, բանկային հաշվի անակցեպտ գանձման, պահման իրավունքի, պարտավորության վաղաժամկետ կատարման պահանջի և գույքի իրացման ծախսերի հաշվարկի հարցերը քննարկման ենթակա չեն:

Հետևաբար տվյալ դեպքում Բանկը չէր կարող գրավի իրացումից ստացված մնացած 7.000.000 ՀՀ դրամը ուղղել «Գամմա» ՍՊԸ-ի այլ՝ գրավով չապահովված պարտավորության մարմանը: Այդ պահանջը Բանկը կարող էր ներկայացնել «Գամմա» ՍՊԸ-ի նկատմամբ ընդհանուր կարգով, սակայն չէր կարող բավարարել գրավի իրացումից գոյացած մնացորդ գումարի հաշվին՝ գրավառուի նախապատվային ռեժիմով:

Այսպիսով՝ գույքի իրացումից ստացված 25.000.000 ՀՀ դրամը պետք է բաշխվեր հետևյալ կերպ.

1. 18.000.000 ՀՀ դրամը պետք է ուղղվեր «Թեո Մետալս» ՍՊԸ-ի՝ Բանկի նկատմամբ գրավով ապահովված պարտավորության մարմանը,

2. մնացած 7.000.000 ՀՀ դրամը պետք է վերադարձվեր «Գամմա» ՍՊԸ-ին,

3. Բանկի կողմից այդ 7.000.000 ՀՀ դրամը «Գամմա» ՍՊԸ-ի այլ՝ գրավով չապահովված պարտավորության մարմանն ուղղելը իրավաչափ չէր:

Եզրակացություն՝

Բանկի գրավի իրավունքը գրավադրված գույքի օտարման հետևանքով չի դադարել: «Գամմա» ՍՊԸ-ն ձեռք է բերել գրավով ծանրաբեռնված գույքը և զբաղեցրել է գրավատուի տեղը, սակայն չի դարձել «Թեո Մետալս» ՍՊԸ-ի վարկային պարտավորության անձնական պարտապանը: Բանկը կարող էր բռնագանձում տարածել ոչ բնակելի տարածքի վրա և ստանալ իր գրավով ապահովված 18.000.000 ՀՀ դրամ պահանջը, սակայն պարտավոր էր մնացած 7.000.000 ՀՀ դրամը վերադարձնել «Գամմա» ՍՊԸ-ին: Այդ գումարը «Գամմա» ՍՊԸ-ի այլ՝ գրավով չապահովված պարտավորության մարմանը ուղղելը իրավաչափ չէր: